

տողութիւնները ներկայանան իրենք իրենց համար անառարկելի ճշմարտութիւններ: Հասարակ տեղեքին, առաքինութիւնը չէ միակ պատճառը այս երջանկութեան: Ո՞վ կը կասկածի վճռական այն պահանջէն, զոր հայ մտաւորականութիւնը կազմաւորած ունի, իր ժողովրդային սոցիալական ու քաղաքական անկախութեան մասին: Անշուշտ պէտք չկայ թուրքին բան հարցնելու: Նորութիւն Բամառ-Բաթիպայէն, Րաֆֆիէն ետքը: Հիմա, Մելիքիսանեանց Մաթիկին հաւաստումովը ո՞վ կը մտածէ տարբեր, թէ այդ երազը ցարդ ապրած է՝ գիրքերու մէջ ջերմացուած ծաղիկին նման: Յեղափոխական սուրբ, անյետաձգելի գործ է զայն փոխադրել ու տնկել զանգուածներու ջերմաջերմ սիրտին մէջ:

Ու քարոզ, քարոզ, քարոզ:

Բառական սա հեղեղումին դէմ (յսած պէտք է ըլլաք այս ջրվէժը՝ համոզուելու համար տարազին ճշդութեան) իմ անգորութիւնը: Մտիկ ընելը յոգնութիւն մըն է, երբ նիւթը կ'անցնի վրայէդ ու ձայնը ծանր կ'իյնայ շուրջդ: Բայց այդ անկարողութիւնը կը դառնայ յուսահատական բարձրահասակ ընկերոջ վեհափառ այլուրութեան դէմ, վաւերական համրի մը պէս աչքով խօսելով ու մօտ չըլլալով նիւթին ու ունկնդիրին: Թո՛ւի, կեդրոնական Անատոլուի սարահարթեան թխութեամբ մը, սանկ քիչիկ մը հովէն զարնուած ու փայլատ նայուածքով: Անիկա թէ՛ կազմ, թէ՛ դէմք՝ համապատկերն է նրբենի ռուսահայուն: Փայտի կտոր մը ձեռքը, խորունկ լրջութեամբ կը փորփրէ քարի ճեղք մը, այծի սալտուրները^(*) թռցնելով, միամիտ ու մինակ՝ ինչպէս է մանուկ մը իր խաղալիքին հետ: Տրիբունը զայն չի տեսներ, նոյնիսկ կը պատմէ դրուագներ, որոնց մէջ անիկա կը կանչուի վկայութեան, իր վերցուցած բաժինին մասին: Բայց առանց պատաս-

(*) Սալտուր – այծին քաղորդ: